# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

10.12.2013թ-ին Երասխ գյուղում տեղի ունեցավ հանրային լսում, նախագահությամբ՝ գյուղապետ Ռ.Օղիկյանի, քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ա. Կարապետյանի:

Մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակմը, բուժկետի աշխատակիցը և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ՝ Երասխի գյուղապետ՝ Ռ.Օղիկյանի հաշվետվությունը 2013թվականի չորրորդ եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց , որ 2013թ. չորրորդ եռամսյակում գյուղապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 20 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
- Գյուղապետարանը ստացել է 6 պաշտոնական նամակներ՝ դատարանից, մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից , որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել է պատասխաններ:
- Բնակիչներին տրվել է 70 տեղեկանքներ և 4 հասցեի վերաբերյալ որոշումներ:
- Համայնքի բնակիչների համար ստացել ենք էժան ցորենի սերմացու 1կգ-ն 160դրամ արժողությամբ:
- 2013թ. բյուջեի սեփական եկամուտները , որոնք կազմում են տարեկան 5217.0 հազար դրամ և ստացվելիք դրամաշնորհը/դոտացիա/ 12784.0 հազար դրամ:

Չորրորդ եռամսյակի ընթացքում մուտքագրվել է.
Ըստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են՝
ա/ հողի հարկ - պլան 148.0 հազար մուտքագրվել է՝ 73.47 հազար դրամ
բ/ գույքահարկ - պլան 807.0 հազար մուտքագրվել է 784.73հազար դրամ
գ/ տեղական տուրք - պլան 592.0 հազար մուտքագրվել է՝ 592.0 հազար դրամ
դ/ հողի վարձավճար - պլան 3.550.0 հազար մուտքագրվել է՝ 2.858.47 հազար դրամ
ե/պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ- պլան 12.784.0 հազար մուտքագրվել է 11.237.90 հազար դրամ:

Համայնքում լուծվելէ 2 /երկու/ փողոցների լուսավորության հարցը:

Համայնքի կրևոր հիմնախնդիրներից դեռ չլուծված են՝ գյուղապետարանի, մշակույթի տան, մանկապարտեզի շենքային խնդիրները, ոռոգման ջրի ներտնտեսային ցանցի հիմնանորոգումը:

ԵՐԱՍԽԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Ռ. ՕՂԻԿՅԱՆ

Կ.Տ